

ԱԿՆԹԱՐԹԱՑԻՆ ՖՐԱՆՍԻԱՆ

Ֆոտոթղթակից Հերբերտ Բաղդասարյանը վերադարձել է Ֆրանսիա կատարած ուղևորությունից: Նրա լուսանկարչական գործիքը բազմաթիվ «նոթեր» է գրանցել, տպավորություններ պատմական հուշարձաններից, այսօրվա Ֆրանսիայի կյանքից, մարդկանցից:

Ահա այդ նոթերից մի քանիսը:

... Էյֆելյան աշտարակը նոնվում է: Ինչ ուժի համու ժամանակ և քանի սանտիմետր՝ կարելի է գտնել յուրաքանչյուր տուրիստական ուղեգրքում: Սակայն Հ. Բաղդասարյանի լուսանկարը ինժեներական կոնստրուկցիայի զարմանահրաշ տաղլիտուղը չէ, որ վավերացրել է: Երկար սպասված հանդիպման հուզմունքն է վերարտադրել այս աշխատանքը, որին հեղինակը տվել է «Առաջին տպավորությունը Փարիզից» անվանումը:

... Մի նոր հանդիպում, Ֆերնան Լեժեի՝ ժամանակակից կերպարվեստի դասականներից մեկի թանգարանը Բյո քաղաքում: Բոլոր նրանք, ովքեր լինում են Կաննում, իրենց պարտքն են համարում այցելել նրա մոտակայքում գտնվող այս փոքրիկ քաղաքի «մեծ տունը»:



... Այս մեկի բախտը բերել է: Գնորդումին վնարում է կանխիկ. նրան շոյել է հենց իրեն՝ Շարլ Ազնավուրին նկարող վարպետի ստորագրությունն ունենալու հեռանկարը:

digitised by

... Ինքնամոռաց աշխատում է վիրտուոզ նեպանկարիչը:

... Անա լուսանկարչի պատկերացրած սրամիտ, կենսուրախ ֆրանսիացին, որ արագ մատիտանկարել է... իր նման մեկին. սրամիտ, կենսուրախ ֆրանսիացու:

... Մոնմարտր: Լուսանկարիչն այստեղ երկար է շրջել: Օբյեկտիվը տեսել է մայթերի երկայնքով շարված նկարները, կտավակալները, առանց որոնց անհնար է պատկերացնել Փարիզը: Էյֆելյան աշտարակի հետ մեկտեղ Մոնմարտրը նույնպես կարող էր տեղ գրավել Ֆրանսիայի մայրաքաղաքի զինանշանի վրա: Մի քանի դրվագ Մոնմարտրից.

... Գնորդի սպասելը այնքան էլ հաճելի զբաղմունք չէ: Լավ է, գոնե այսօր երկար ոտպեները կարելի է ընկերուհու հետ կարնել:





... «Անկոչ հյուր»: Լուսանկարիչն այսպես է անվանել այս աշխատանքը: Ֆրանսիացի մայրը տագնապով է նայում Տուլոնի նավահանգստում խարիսխ գցած ամերիկյան ռազմանավի շարագույժ զանգվածին...

... Լուսանկարչի ժապավենը շարունակում է պատմությունը: Նրա լուս կադրերը խոսում են միշտ երիտասարդ, անհանգիստ, բազմադեմ Ֆրանսիայի մասին. մեր օրերի Ֆրանսիայի:

A.R.A.R.@